ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

17.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/06

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 19.04.2019թ.)

ՈՒսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6510-2019 գրությամբ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1.ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային ժողովի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 26.03.2019թ. թիվ 1/1291-19 գրության հիման վրա, 18.04.2019թ. թիվ 26/26-1/6510-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 25.04.2019թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել ՀՀ Ազգային ժողովի կողմից «Խմելու ջուր և մեկանգամյա օգտագործման բաժակներ» ձեռքբերելու նպատակով հայտարարված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (հետայսու նաև Աճուրդ) և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/129 բողոքի վերաբերյալ կայացված որոշման հիման վրա ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով աճուրդի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը՝ սահմանելով վերջնաժամկետ մինչև 15.03.2019թ. ժամը 10:30:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 15.03.2019թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1 կետի համաձայն՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

Ընկերության կողմից վկայակոչվել է հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը, որը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընկերությունը հայտնել է, որ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ Ազգային ժողովի կողմից «Խմելու ջուր և մեկանգամյա օգտագործման բաժակներ» ձեռքբերելու նպատակով հայտարարված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/129 բողոքի վերաբերյալ կայացված որոշման հիման վրա ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել /11.03.2019թ./ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով աճուրդի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը՝ սահմանելով վերջնաժամկետ մինչև 15.03.2019թ. ժամը 10:30:

Ընկերությունը նշել է, որ ի սկզբանե գնահատող հանձնաժողովի կողմից փաստաթղթեր ներկայացնելու ծանուցումը ուղարկվել է info@splashusa.am էլ. հասցեին, որը սակայն 2019թ. փետրվար-մարտ ամիսներին այլևս չի գործել: Ի հավաստումն վերոնշյալի՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը զանգահարել է Ընկերության ներկայացուցչին և հայտնել, որ գնահատող հանձնաժողովի կողմից ուղարկվող ծանուցումը Ընկերության էլ. փոստին չի հասնում, որին ի պատասխան ներկայացուցիչը հայտնել է, որ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն 2019թ. միացել է <<Նոյ>> և <<Բջնի>> ընկերություններին, այդ իսկ պատճառով Ընկերությունների դոմեն-հոսթինգներում առկա են տեխնիկական խնդիրներ /կցելով համապատասխան ապացույցները/ և Ընկերության նոր էլ. հասցեն է հանդիսանում՝ info@bjni.am :

Ընկերությունը հայտնել է, որ << գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընկերության կայքի՝ bjni.am և համապատասխանաբար կայքին կցված info@bjni.am էլ. փոստի սպասարկող <<Վեբ Դոռադո>> ՍՊԸ-ն իր 20.03.2019թ. տրամադրած գրությամբ նույնպես հավաստել է, որ info@bjni.am էլ. փոստային հասցեն mailserveri-ի ծրագրային թարմացման պատճառով ս/թ մարտի 11-ից ունեցել է նամակների ստացման և ուղարկման խնդիրներ, որը կարգավորվել է ս/թ մարտի 15-ին: Ծրագրային թարմացման մասին երևում է նաև կից էջից:

Վերոհիշյալի հետևանքով գնահատող հանձնաժողովը info@bjni.am էլ. հասեին է ուղարկել փաստաթղթեր ներկայացնելու ծանուցումը՝ վերջնաժամկետ սահմանելով մինչև 15.03.2019թ.:

Ընկերությունը նշել է, որ այնուհետև տեխնիկական խնդիրները վերացնելու արդյունքում՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն info@bjni.am էլ. փոստի միջոցով 15.03.2019թ.-ին ժամը 12:25-ին Աճուրդի գնահատող հանձնաժողովին է ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը:

Ընկերությունը նշել է, որ սակայն՝ ինչպես հետագայում պարզվել է, որ << ազգային ժողովի կողմից «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն գնահատվել և մերժվել, քանի որ գնահատող հանձնաժողովը վերջնաժամկետ էր

սահմանել 15.03.2019թ. ժամը 10:30, իսկ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից փաստաթղթերը ներկայացվել էին 15.03.2019թ. ժամը 12:25:

Ընկերությունը հայտնել է, որ ուումնասիրությունից պարզ է դառնում, որ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ եթնակետով իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի՝ որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը ստանալուց հետո սահմանված ժամկետում Աճուրդի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Սակայն ՀՀ ազգային ժողովի կարիքների համար կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով աճուրդի գնահատող հանձնաժողովը՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին տրամադրելով Կարգի 43 կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետը՝ համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու համար, սահմանել է նաև թե մինչև ժամը քանիսը կարող է Ընկերությունը ներկայացնել փաստաթղթերը, այնինչ Ընկերությունը սահամանված վերջնաժամկետի օրը, այն է 15.03.2019թ. ուղարկել է պահանջվող փաստաթղթերը:

Ընկերությունը գտնում եմ, որ այս պարագայում առկա չէ Ընկերության կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ տվյալ դեպքում առկա է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուի համապատասխան էլ. հասցեին ուղարկելու բոլոր ապացույցները, սակայն պատվիրատուի կողմից նշված օրվա ժամից երկու ժամ անց (10:30 փոխարեն՝ 12:25):

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը քննելիս հաշվի առնել Ընկերության կողմից դրսևորած վարքագիծը և վերջինիս կողմից պարտավորության խախտում չդիտարկել փաստաթղթերը նշված ժամից երկու ժամ ուշ ներկայացնելը, որի պատճառն է եղել էլ. փոստի խափանումը, ինչը

հիմնավորվում է նաև փոստը սպասարկող «Վեբ Դոռադո» ՍՊԸ-ի համապատասխան հավաստումը:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 26.04.2019թ. ժամը 12:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

3. ՀՀ ազգանին ժողովի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ազգային ժողովը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.03.2019թ. թիվ 04/31.2/4894-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ազգային ժողովի կողմից «խմելու ջրերի և մեկանգամյա օգտագործման բաժակներ»-ի ձեռքբերման նպատակով 21.11.2018թ. հայտարարված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով ընթացակարգի երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից անգործության ժամկետում բողոքներ քննող անձ՝ Էմիլ Սարգսյանին ներկայացվել է բողոք, որը բավարարվել է վերջինիս 21.01.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2018/129 որոշմամբ: Պատվիրատուն նշել է, որ ի պատասխան ՀՀ ազգային ժողովի՝ 04.02.2019թ. թիվ 325-19 գրության, ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2019թ. թիվ 01/26-3/2956-19 գրությամբ առաջարկվել է քննարկել գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 21.01.2019թ. կայացված՝ թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2018/29 որոշման բողոքարկման նպատակահարմարության հարցը: 11.03.2019թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշել է ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ա/Ձ Գրիգոր

Բաբայանին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնել և նրա հայտը մերժել:

Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 15.03.2019թ. ժամը 10:30-ն) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Նշված ժամկետում «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը: Ուստի՝ 15.03.2019թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշել է հիմք ընդունել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասի պահանջը՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ տրամադրում է Ա/Ձ Գրիգոր Բաբայանի (ՀՎՀՀ՝ 83834488) և «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00136902) տվյալները, գնահատող հանձնաժողովի համապատասխան նիստերի արձանագրությունները, «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցումը և նամակագրության մասին վկայող էլեկտրոնային փոստից արտահանված պատկերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 26.04.2019թ. ժամը 12:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ՆԳ-2019/06 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ազգային ժողովի կողմից ՀՀ ազգային ժողովի կարիքների համար խմելու ջրի և մեկանգամյա օգտագործման բաժակների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ , որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.03.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով, համակարգի միջոցով (11.03.2019թ.) ծանուցել է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.03.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով մերժել է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ որ վերջինս սահմանված ժամկետում (մինչև 15.03.2019թ. ժամը 10:30) չի ներկայացրել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6510-2019 գրությունը, ՀՀ ազգային ժողովի 28.03.2019թ. թիվ 04/31.2/4894-19 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ***ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված***

երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված ***փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը,*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ազգային ժողովի կողմից ՀՀ ազգային ժողովի կարիքների համար խմելու ջրի և մեկանգամյա օգտագործման բաժակների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն:

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին ***11.03.2019թ.*** ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերի II մասի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝

1) համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3-ի.

բ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

գ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով). Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում

հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:

դ. զ. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.03.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով մերժել է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս սահմանված ժամկետում (մինչև 15.03.2019թ. ժամը 10:30) չի ներկայացրել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ ***առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում***»:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերը, արձանագրում եմ հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով հստակ սահմանվում է, որ եթե օրենքով կամ ***տվյալ իրավահարաբերությունը կարգավորող***

օրենսդրական ակտով սահմանված է ժամկետների հաշվարկման այլ կարգ, ապա տվյալ ակտով կարգավորվող իրավահարաբերությունների ժամանակ կիրառվում է այդ օրենքով կամ ***իրավահարաբերությունը կարգավորող օրենսդրական ակտով սահմանված ժամկետների հաշվարկման կարգը:***

Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ***ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը***, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Այսպիսով, արձանագրում եմ, որ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն 11.03.2019թ. ծանուցվելով որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ***երեք աշխատանքային օրվա*** ընթացքում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետից հետո՝ 15.03.2019թ.), որի հետևանքով Ընկերությունը խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցման: Ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6510-2019 գրությամբ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ